



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԵ · 1865 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ · — ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ֆ Ի Մ Ի

« Ընկալ, ով աստուածասէր և գլխասէր հոգի,
 » մեծդ ըստ մարմնոյ և բարգաւաճ ըստ ոգւոյ,
 » ծիրանածինդ ՖԻՄԻ, զբաղձալին քո, երկամբք
 » ձեռին մեղապարտիս Յովհաննու եպիսկոպոսի
 » կրտսերս եղբօր հօր քո. որով յԱստուած եւ
 » յաստուածայինն խոկասցիս միշտ. եւ որքա
 » մեալ սրտի քո սփոփանս սովաւ արասցես. զի
 » տելով՝ զի սեփական է մարդկան նրժդեհու
 » թիւն և պանդըխտութիւն և փորձանք : Որոց
 » անդորր տացէ ձեզ՝ որ ամենահնարն է » :

Այս վայելուչ և սրտառուչ յիշատակարանս՝ զոր հոս իր հին սկզբնագիր ձևովը կու կարդաս, Հայկակ, հանուած է Յովբայ և Սողոմոնի գրոց օրինակէ մը, մեզմէ 600 տարի առաջ գրուած . զոր ես երբ առաջին անգամ կարդացի, երկար կանգ առի : Այն գրոց երկու մեծամեծ աննման և աստուածաշունչ հեղինակներն՝ յիրաւի մտացս մեծ մասը կու գրաւէին, բայց անոր առաջին ստացողն զսիրտս կու գրաւէր . վասն զի ըստ անսուտ վկայութեան իր սրբազան և մերձաւոր անձին՝ այն ստացողն, այն գրեթէ դեռ մեզի անծանօթ Ֆիմին՝ մեր անցեալ թագաւորաց մէկուն զուս.

տրր է եղեր, և իր կենաց ամենէն զգալի երևոյթն այլ՝ տրտմեայ սիրտն. և ոչ այսչափ միայն, այլ և աւտոռաճասէր և գրասէր հոգի մը՝ կու վառէ եղեր այն սիրտը: Այսպիսի սրտի մը հանդիպել և զանց ընել՝ սիրտ չունենալ է: Չոր և քար արձանի կտոր մը, դաստակ մը, մատ մը՝ իր փորուածքին ճարտարութեամբ կու յափշտակէ կրթուած աչք ու միտքը՝ առ ճարտարապետն և առ բուն գաղափար պատկերին. իսկ նշանակք այսպիսի սրտի մը՝ ո՞րքան աւելի սիրալի և սրբազան պիտի ըլլան ըզգաստ հայրենասիրաց. մանաւանդ եթէ գուշակեն որ այն սրտին տրտմութիւնն կենօքը չափ քշեր է, թէ և երկնաւոր յուսով կու քաջալերուի եղեր: Ես չվախցայ և չեմ վախեր նաև Յորայ մը քով կարեկցութեամբ և զարմանօք տեսնել այդպիսի Ֆիմիկ մը. վասն զի եթէ այն համբերողաց նախատիպն՝ ամեն տեսակ ցաւ ու զրկանք կրեց եօթը տարի, վերջը 170 տարի այլ վայելեց զբարիս երկրի՝ ՚ի մէջ բազմութեան զաւակաց, թոռանց և թոռնորդուց, զի «Տէր աճեցոյց զՅոր. . . » և ետ Տէր կրկին քան որչափ ինչ էրն » յառաջագոյն Յորայ ՚ի յաճախութիւն ... օրհնեաց զվերջինն Յորայ քան » զառաջինն. և էին խաչինք նորա ոչ » խաղք 14000, ուղտք 6000, լուծք ե » զանց 1000, և այլն. և վախճանեցաւ » ծերացեալ և լցեալ աւուրքք »: Եւ եթէ իմաստունն Սողոմոն (առանց Յորայ պէս վշտակրելու) լաւ ճանչցաւ և վկայեց թէ ամենայն ինչ ունայնութիւն ունայնութեանց է, սակայն չծածկեց այլ թէ « զամենայն զոր ինչ խնդրեցին » աչք իմ՝ ոչ զրկեցի ՚ի նոցանէ, և ոչ » արգելի զսիրտ իմ յամենայն ուրա » խութենէ » . որոց մէջ թաթաւեալ թաղեցաւ ինքն այլ: . . .

Իսկ Ֆիմի. . . այո՛, և սա անոնց նման ճիրսնաճիւն էր, և մե՛ծ ըստ մարմնոյ, այլ և բարգաւաճ ըստ ոգոյ, թագա-

1 Այսպէս անուանէ զՅոր իմաստասէր կաթուղիկոսն մեր Յովհաննէս:

ւորական օրիորդ, մեծատուն և իմաստուն. վայելեց ինքն այլ թերևս 20 տարի մը երկրաւոր մեծութիւն և բարիք, բայց այլ աւելի կրեց ցաւ և չարիք. և որ մեծն է՝ ոչ յետոյ Յորայ պէս կրկին աճեցաւ, և ոչ անոր և Սողոմոնի պէս ՚ի գահոյսն վախճանեցաւ. այլ անշուք և անչփոթ մենարանի մը մէջ քաշուելով՝ միակ և յետին ախոյիսն տրտմեայ սրտին գտաւ այս իմաստուն և մեծատուն թագաւորաց զրքոյկը, զոր իր հօրեղբայրն Յովհաննէս և պիսկոպոս գրեց իր ձեռին երկաւրք, և զարդարեց պատկերօք և երանգօք և ընծայեց իր թոռնէին: Անշուշտ շատ հեղկաթկրթած են հեզիկ և պայծառ մարգարիտք արտասուաց սգաւոր բամբլին՝ այն կրկնակի խնկելի էջերուն վրայ, որոց մէկն է ահաւաղիկ հոս լուսատրպեալ տեսածդ: —

Թէպէտ և ոչ մեր պատմիչք և ոչ այս իր յիշատակագիր հօրեղբայրն կու ծանուցանեն թէ ինչ կեանք և ինչ կիրքեր ունեցաւ Ֆիմի, և ո՞ր էր գլխաւոր պատճառ տրտմութեան սրտին. սակայն մը նացեալ քանի մը հարևանցի և համառօտ գրուածներէ՝ թէ մերոց և թէ մանաւանդ օտարաց, փափագեցայ պրպրտել անոր գաղտնիքը. և այն կտորտած յիշատակներէն՝ եթէ կարելի է՝ նորագել կանգնել ընկած տրտմած ազնիւ սիրտ մը, որոյ հանգստեան յիշատակը այս օրուանս (դեկտեմբերի 3^ի) կունշանակէ մեր Ռուբինեան թագաւորաց Յայամաւուրքն՝ մէկ տողով մը:

Արդ Ֆիմի՛ դուստր էր Չապելի և Հեթմոյ, այն մեծատոհմ և մաքրակենցաղ ամուսնաց՝ որք կրնան ընծայուիլ յօրինակ թագաւորաց. և որոց զաւակ ըլլալն իսկ մեծ փառք և բաղդ էր. բայց անոնց հոգւոյն և սրտին՝ քան թէ արեանը նմանութեամբը՝ աւելի մեծ եղաւ Ֆիմի, և ըստ այսմ՝ գերազանց իր հարազատաց մէջ այլ, որոց երիցագոյններէն մէկն էր, և հինգ քերց մէջ ինքն երկ-

1 Եւ Ֆիմիա կամ Եւփիմէ անուանն նուազական է:

որոգ, թէ և հարսնութեան վիճակաւ՝ դարձեալ ամենէն առաջ անցաւ . վասն զի անդրանիկ քոյրն Չապլուն իրմէ վերջը (1254) տրուեցաւ 'ի կնութիւն Պեմուն, զի Չ' Բրընձին (իշխանին) Անտիոքայ, որ նախապատիւ էր 'ի մէջ փռանկ իշխանազանց յերկրին Ասորոց . իսկ Ֆիմի երկու տարի այլ առաջ ինգրեցաւ և ընծայեցաւ 'ի հարսնութիւն Յուշիաւնու իսլիկեաւ և 'ի տիկնութիւն Սիդոնի: Այս երկուքին (տիրոջ և տեղւոյն) վրայգը կ'արժէ նախ տեղեկանալ, մանաւանդ որ Ֆիմիի կենաց և կրից ծանօթ գէպքերը՝ գրեթէ միայն ասոնցմով կրնամք ժողովել:

Երբ առաջին անգամ խաչակիրք սուրբ երկրին տիրեցին (յամին 1099), մեծ պատերազմով՝ այլ զարկին այլազգիները՝ հին այլազգեաց պարծանք և հսկայ Գողիազու հայրենեաց (Գէթ քաղքին) մօտերը, զոր ոմանք նոյն սեպէին Յունաց և Հռովմայեցոց Յամնիա կոչած քաղաքաւանին հետ, որ և մինչև հիմայ ճեպնէ կոչուի, և մօտիկ է 'ի Ռամիա (հինն Արիմաթեմ): Այս յետին քաղաքիս մօտ այլ երեք տարի վերջը պատերազմ մ'եղաւ, յորում ընկաւ և Գողիացի կոմսն Շարդրի Ստեփանոս . յետոյ իր երկու որդիքն զրկուելով իրենց հայրենի կոմսութենէն՝ 'ի Պաղեստին զինուորէին ընդ խաչակրաց . մինչև փուլկ կամ Ֆուլգ թագաւորն Երուսաղեմի՝ անոնցմէ կրսերին՝ որ Պալիսն (Պալտուն) կոչուէր՝ տուաւ 'ի պայազատութիւն նախայիշեալ Յամնիա քաղաքաւանը, որ այն ատեն բաւական բարգաւաճ էր . և անունը փոփոխուելով կոչուեցաւ իսլիկ կամ իսլիմ, իսլիկէն, իսլիմ, և այլն: Պալիան քաղաքին անունը իրեն սեփականեց և իր տոհմին, որ շատ զօրացաւ և աճեցաւ, տարածեցաւ բոլոր փլունիկիոյ եզերքը, և կիպրոսի թագաւորութեան մէջ . անանկ որ գրեթէ ժԳ-ժԵ դարուց մէջ՝ հոն Լատինաց կամ փռանգաց ամենէն հուշակաւոր տոհմն էր (յետ Լուսինեանց կիպրոսի): Պալիանու որդւոց և թոռանց մէկն շինեցին կամ կարգաւ

ւորեցին Les Assises de Jérusalem ըստած անուանի օրինագիրքը, որով կառավարէին թագաւորք Երուսաղեմի և կիպրոսի, իշխանք Լատինաց յարևելս և նաև ըստ մասին մերազգի կիլիկիոյ թագաւորք: Պալիանայ պայազատքն իբրև հպատակք Երուսաղեմի թագաւորաց՝ անոնցմէ ժառանգութիւն առին գրեթէ բոլոր փլունիկիոյ կամ Ասորոց ծովեզերեայ քաղաքները և մանր իշխանութիւնները, որոնք երբեմն Դամասկոսի, Հալէպու և Եգիպտոսի սուլտանաց ձեռքը կ'ընկնէին, երբեմն փռանկաց, այսինքն թագաւորին Երուսաղեմի, և յետոյ կիպրոսի: Այս թագաւորութիւն՝ բաց իրեն սեփական վիճակներէն՝ չորս գաւառ կամ Պարոնութիւն ունէր, զոր պայազատութեամբ կու տար որու որ կ'ուզէր: Այս չորս՝ պարոնութեանց մէկն էր Սիդոն քաղաքն ծովեզերեայ, իր բաւական ընդարձակ վիճակովը, յորում էին կեսարիա, Բեթսան և Պելփորդ (գեղեցիկ-բերդ) նշանաւոր ամրոցն: Այս մեր պատմութեան (Ա Հեթմոյ թագաւորութեան) ատենը Սիդոնի տէրութիւնն այլ անցեր էր իսլիկեան տոհմին, և զօրաւոր իշխան՝ Պալիան մը՝ (Գ կամ Դ) տիրէր մինչև մօտ 'ի կէս ժԳ դարու՝ յորում մեռաւ . և իր այրին Մարգարիտա կու հոգար թէ տէրութիւնը և թէ իր մատղաջ պայազատ որդին Յուշիաւն կոչուած: Պալիանայ մէկ եղբայրն՝ կոմսն Յովհան իսլիկեան՝ Յոպպէի տէր էր և շատոնց առած էր 'ի կնութիւն Հեթմոյ քոյրը՝ Մարիամ, զոր մեր յիշատակագրաց մէկն փռանկարար կոչէ կալա-Մառի գուշուէս Ճափուս (Marie contesse de Jaffe). իսկ Պալիանայ պայազատն և տէրն Սիդոնի Յուլիան՝ առաւ զՖիմի . ինչպէս յետ քիչ ժամանակի՝ Տիւրոսի տէրն այլ (Սրոյ տէրն՝ ըստ մեր պատմաց)

1 Միւս երեքն, Ա, Յոպպէ և Ասկադոն . Բ, Գալիկա . Գ, Կրակ, Մոնրէալ, Հեբրոն:
 2 Փրեատերիկոս Բ Գերմանիոյ կայսրն՝ իբրև թագաւոր Երուսաղեմի, այն թագաւորութեան բոլոր տէրութեանց վրայ իրեն երեսփոխան գրեթէ էր այս Պալիանը:

Ամաւրի Լիւսինեան՝ առաւ 'ի կնութիւն զԶապլուն՝ դուստր Լևոնի Գ, որդւոյ Հեթմոյ և եղբօր Ֆիմեայ: Գրեթէ ժԳ դարուն կէսը բոլոր Ասորոց նշանաւոր քաղաքաց և տէրութեանց տիկնայքն Հայոց նոր թագաւորութեան օրիորդներն էին. ոչ միայն 'ի փիւնիկէ, այլ և բարձրագոյն գահուց վրայ, յԱնտիոք, 'ի կիպրոս, և մինչև 'ի Բիւզանդիոն:

Ասոնցմէ էր և Ֆիմի, իբրև 1/4 տարեկան, երբ (1251) պատանին Յուլիան պայազատն Սիդոնի և իր խնամակալ մայրն Մարգարիտ՝ խնդրեցին զնա իրենց հարս. որ և շատ հաւանօրէն՝ առաջին հարսն ելաւ իր հօր արքունի դարպասէն, երբ մեծ շինութեան և փառաց մէջ էր այն արքունիքն. երբ չորս կտրիճ և մեծիշխան եղբարք թագաւորին Հեթմոյ թև թիկունք էին անոր, և երկուք այլ աղօթիւք օգնէին, (Բարսեղ արքեպիսկոպոսն Գրազարկու, և կրբսերն Յովհաննէս Բարուն), և ամենուն վրայ հսկէր՝ հինաւուրց եղևնոյ պէս հովանանալով ծեր և առոյգ արքայահայրն կոստանդին: Յուլիանու և Ֆիմիի պսակին պայմաններն, այսինքն օժտին վերաբերած խնդիրք և դաշինքն՝ բաղդովի պահուած գտուեցաւ Մարգայի ասպետաց զիւանաց մէջ և հասաւ մեզի, այն ատենուան փռանկաց լեզուով գրուած, միայն ստորագրութիւնն հայերէն կարմրագիր գրած մեր թագաւորին իսկական ձեռագրն, Հեթմոյ Թ. Ա. ԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ, և իր արքունի կախեալ կնքովը վաւերացած, ինչպէս որ կ'ըսէ այլ թղթին վերջը. È por so qui cesles lettres soient fermes é estables, ci avons escrit l'escrit de nostre main vermoil é sayelé de notre ceau pendant. Դաշնադիրքն էին մէկ կողմէն ինքն Հեթմոյ թագաւոր, մէկայլ կողմէն տիկինն Սիդոնի և իր տիրորդին (la gentille dame de Sayette, dame Margariete, é le gentil seignor de Sayette Sire Julian). Իսկ խոստակատարք կամ վրկայքն էին Հիւրընկալ կամ Երուսաղեմի ասպետաց կարգապետն՝ Գուլ. Շաղօնէօֆ (frère Guilliam de Castel-

nov), և Հեթմոյ քեռայրն Յոհան Իբիլի (gentil cunte de Jafe sire Johan d' Ibilin): Իսկ պայմանքն էին որ Հեթմոյ տայ իր դուստրը (notre filie damoiselle Fémie) առ Յուլիան, և օժտի համար 25000 սառակինեան-բիզանդ ոսկի Ա.ք.քեայի կշուով (xxv. m. besans sarrazines au pois d' Acre), որոց մէկն կ'արժէր չորս խաչակնիք բիզանդ Հայոց (quatre besans de nos staurat por un besant sarrazines). այս հայկական ըստակը (սղաւրաղ-խաչակնիք) թուի թէ մանրիկ ոսկի մ'էր, իսկ սառակինեան բիզանդը 12 Ֆրանգ մը կ'արժէր ըստ ոմանց զրամագիտաց. որով Ֆիմեայ օժտոն 300000 Ֆրանգի մօտ կ'ըլլայ¹. սոր երրորդ մասը որ է 8000 բիզանդ (96000 Ֆր.) զոհարեղէն, մարգարիտ, և ոսկւոյ ու արծաթի զարդեր պիտի տար հայրն իր օրիորդը խաւրած ատեն. իսկ մնացեալ 17000⁰ այլ զուտ ստակով պիտի վճարէր՝ պսակը կատարելէն ետև: Հարսնածուք այլ պիտի պարտաւորէին այն կանխիկ տրուած օժտը յօգուտ հարսին պահել կամ դարձնել 'ի կալուածս. և ամենկին ազատ թողուլ զբամբիշը ուզած տեղը կենալու կամ երթալու, հետը ուրիշ մարդ չգնելով՝ բայց երեք ձիաւոր: Եւ 'ի հաստատութիւն բանիս՝ Յուլիան և Մարգարիտ, իրենց ազգականքն և պատուաւոր մարդիկ՝ պիտի ստորագրէին և իրենց կապարէ կնքովը կնքէին պայմանագիրը: Այս ընելէն ետև պիտի կատարուէր հարսանիքն 'ի տօնի խաչ (վերացին, 'ի սեպտեմբերի), կամ անկէ ետև:

Թերևս դիտեցիր, Հայկակ, որ փեսային մայրն կու յիշուի, իսկ հարսին՝ ոչ: Մինչդեռ իր նազելի դստերաց առաջին հարսնութեան խօսք կ'ըլլար, մայրն՝ Զապել դշխոյն՝ փոխադրեցաւ յերկնա.

¹ Լևոն Ա թագաւորն իր Եղեկիմի դուստրը՝ Երուսաղեմի (Յովհան) թագաւորին կին տալու ատեն՝ անոր հարսանեաց պարտաստութեան համար միայն 'ի Հիւրընկալ ասպետաց 50000 սառակինեան բիզանդ ոսկի փոխ կամ փոխնորդ առեր էր:

յին առաջատան, վախճանելով 'ի ըսկիզբն 1252 տարւոյ, որոյ վերջերը կատարեցան հարսանիքն Յիմեայ : Արդեօք ասիկայ առաջին հարուած մը չէր օրիորդին, և պատճառ մը տրտմութեան սրտին, սգոյ և հարսնութեան պատմունքները յերար շփոթելով : . . . Սակայն թողունք որ հայրն և հարազատքն սրբեն աշուրները, և « քաջալերեաց քոյր մեր », ըսելով՝ յուղարկեն փառօք իր տիկնութեան տեղը . մենք այլ մօտենանք այս տեղւոյս ծանօթանալու :

Հիմակուան Ասորւոց երկրին մեծ և բանուկ նաւահանգիստէն (Պէյրութ) իբրև 45 մղոն մը վար դէպ 'ի հարաւ ծովեզերքը պզտի հրուանդանի պէս երկրնցած երկրին վրայ շինուած և ծանօթ է Սայտե քաղաքն, որ վերոյիշեալ պայմանագրին մէջ Սայեդ կոչուի . հին Ասորիք և երբայեցիք Մայդան կոչէին, ինչպէս մեր Ս . գրոց մէջ այլ գրուած կայ, Ծուր և Մայդան, որք ըստ Յունաց և Լատինաց Տիւրոս և Սիդոն կ'ըսուին, և ստէպ յիշուին 'ի հին և 'ի նոր կտակարանս, և ճանաչուին իբրև երկու հարազատ քորք և տիկնայք բովանդակ Միջերկրականի արևելեան ծովափանց : Տիւրոս թէպէտ և աւելի նշանաւոր և մեծ էր և թագուհի ծովուց կոչուէր 'ի հին ժամանակս, սակայն դուստր էր Սիդոնի, որ շատ դարեր մինակ ծաղկելէ վերջը ծնաւ զՏիւրոս . և ինքն մայրն ծովային քաղաքաց փունիկիոյ՝ աշխարհիս հնագոյն վաւերական քաղաքաց մէկն էր . վասն զի նոյնահապետին թռան՝ Քանանու՝ անդրանիկն Սիդոն՝ շինեց զայն և իր անունը դրաւ, որ նշանակէ ձուկն կամ ձկնորս . եթէ 'ի սկզբան՝ (վենետկոյ պէս) ձրկնորսաց ապաստանարան մ'էր, քիչ ատենէն վաճառականութեան մայրաքաղաք եղաւ . և երբ իր դուստրն՝ Տիւրոս գերազանցեց այլ յայսմ մասին, դեռ ինքն մայրն Սիդոն ծաղկէր ոչ միայն վաճառականութեամբ, այլ և ճարտարապետական արուեստով աննման էր, մօտն ունենալով Լիբանանու հին և անսպառ մայրիները . որոցմէ կտրածը

և կտրող ու կոկող կու խաւրէր ինչուան առ Սողոմոն, Աստուծոյ տաճար, և իրեն պալատ շինելու համար . նաև Տիւրոսի մէջ տիրէր հարստութեամբ . « Եւ »իշխանք քո (Տիւրոսի) բնակիչք Սիդովնացւոց »¹ : Սիդոն կրնար ինքզինքը պաշտպանել այլ . ոչ միայն 'ի ծովէ ամուր բերդով և գոգովը, այլ և 'ի ցամաքէ . և ինչուան Աստուծոյ ժողովրդեան՝ իսրայելացւոց՝ ձեռքէն այլ ճողպրեց զինքը . « Եւ Ասեր ոչ եբարձ . . . » զբնակիչսն Սիդոնի »² . վասն զի Յեսուելայայ այս (Ասերայ) ցեղին վիճակեր էր զՍիդոն, զոր ՄնՏ³ անուանէին այն ատենն այլ . և իրմէ շատ առաջ՝ Յակոբ նահապետն իր Զաբուղոն որդւոյն սահմանները ինչուան հոն կ'ընդարձակէր . « Զաբուղոն յեզերս ծովու բնակեսցէ . . . » և ձգեսցի մինչև 'ի Սիդոն »⁴ : Հրեայք միշտ պատկառանքով և նախանձով կու նայէին անոր գոռոզութեանը ու զօրութեանը վրայ և կու սպառնային մարգարէից բերնով (Եզեկ . և Եսայի) . և ինչուան զծովն որուն առաջին իշխողն եղաւ իրեն դէմ՝ կ'ուզէին գրգռել . « Յամօթ լեր, » Սիդոն, ասէ ծով »⁵ : Այսպէս ծովն քաղաքին, քաղաքն ծովուն սաստելով և իշխելով՝ Սիդոն կրցաւ հազարով տարիներ պերճաբար կանգնիլ իր բարձրականդակին վրայ, լցուիլ ծովու և ցամաքի վաճառօք, և անոնց արգասեօքը յղփանալ և շփանալ, նման ուրիշ մեծահարուստ շահաստան քաղաքաց, որոց նման այլ զեղծման և անիծից տեղ մը դարձաւ . մինչև ինքնին Տէրն ծովու և ցամաքի և Աստուած մեր, իր մարդկօրէն տնօրէնութեան ատեն ոտքով կու խելով անոր սահմանները, և վարդապետութեանը մէջ ուրիշ գոռոզ քա-

1 Եզեկէլ ԻԵ :
 2 Դատաւ . Ա . 31 :
 3 Յեսու ԺԹ . 28 :
 4 Ծննդունգք ԽԹ , 15 : — Կ'ըսեն թէ այս նահապետս՝ Զաբուղոն, և Սոփոնիս մարգարէն՝ թաղուած են 'ի Սիդոն : Քաղաքին մօտ քարաբլի մը կող շատ գերեզմաններ փորուած են, որոց մէկը հին փունիկեցի թագաւորի մը՝ յամին 1835 բերին 'ի Բարիզ :
 5 Եսայի, ԻԳ :

ղաքներ խրատելով կ'ըսէր. « Եթէ 'ի » Տիւրոս և 'ի Սիդոն եղեալ էին զօրու- » թիւնքն՝ որ 'ի ձեզ եղեն՝ վաղու ևս » արդեօք խորզով և մոխրով ապաշխա- » րեալ էր »¹ : Բայց թերևս նոյն եր- կրրպագելի ոտքերն էին՝ որ ազատե- ցին զՍիդոն հիմնայատակ կործանմանէ կամ՝ ծովուն ալեաց մէջ ծածկուելէն : Արդարև նախախնամեալ քաղաքաց և տեղեաց մէկն կ'երևի ինծի Սիդոն, և (ոչ միայն Ֆիմեայ, այլ) ասոր հա- մար է որ չեմ՝ կրնար շուտով հեռանալ անկէ. զոր ոչ թողունք Յակոբայ, ոչ Յեսու և ոչ թագաւորք Հրէից կրցան նուաճել. ոչ Նարուքոդոնոսոր 13 տարի աշխատելով կրցաւ տիրել Տիւրոսի, և անոր հետ թողուց զՍիդոն այլ. և ոչ մեծն Աղէքսանդր՝ որ բռնագոյն քան զԲարեւազուց բռնաւորն՝ յաջողեցաւ, առաւ քանդեց ամայացուց զԾուր, չղը- պաւ Ծայդանի. գոռոզ գուստրը՝ աւա- զի և ալեաց մէջ խողեց, զմայրը շոյեց շինեց, դարձընելով անոր իր հրաժա- րած և մշակ դարձած թագաւորը (Աբ- դողոնիմ) : Իրմէ ետքը Յունաց, Հռով- մայեցուց, Արաբացուց և թուրքաց ձեռ- քէն անցնելով՝ Խաչակրաց ատեն այլ դեռ չէն քաղաք մ՝ էր, եղեւնափայտ պալատներով. և երբ ասոնց ձեռքն ըն- կաւ՝ (յամին 1111) Եւստաքիոս կառ- նիէ անուամբ փռանկ ասպետիմը տրուե- ցաւ, ուսկից անցաւ Իսլիմեան տոհ- մին, ինչպէս առաջ ըսի. և թէ ասոնց ատեն և թէ վերջը, թէ և շատ փոփո- խութիւն կրեց, բայց միշտ բաւական բանուկ մնաց. ինչպէս ինչուան հիմայ այլ Դամասկոսի հետ վաճառակցու- թեամբ չէն ու բազմամարդ է :

Ահա այս քաղաքիս և անոր երկրին տիկին եկաւ Ֆիմի. որոյ գալուստն թէ և 'ի սկզբան շնորհաւոր եղաւ, բայց քիչ ատենէն Սիդոն իր տիկնոջ այլ բազմաց այլ սգաւոր եղաւ : Շատ տարի չէր որ այլազգիք կոխեր և աւրեր էին զանի- կա, երբ Ֆիմեայ գալուն սկսաւ նոր ոգի առնուլ և ծաղկիլ. վասն զի մէկ կող-

1 Մատթ. ԺԱ. 21 :

մէն ասոր հայրն՝ թագաւորն Հայոց Հե- թուսմ՝ անոր պաշտպան կենար և գան, ձերովը կու ճոխացընէր. ուրիշ կողմէ անակնկալ բարերազողութեամբ՝ աւելի մեծ ազգի մեծ թագաւոր մը եկաւ օգ- նական Սիդոնի, և ազնուապէս պա- տուադիր անոր տիկնոջը. գերագոյնն և սիրելագոյնն թագաւորաց փռանկաց Սուրբն Լուդվիկ. որ 'ի Կիպրոս եղած ատենն (1248-9), ծանօթացեր էր ընդ Հեթմոյ : — Այն ատենուան թագակրաց մէջ չկայ մէկն քան զՀեթուսմ՝ նմանա- գոյն Լուդվիկի՝ զգօնութեամբ, քաջու- թեամբ և առաքինութեամբ վարուց : Լուդվիկ յետ արշաւանացն յեգիպ- տոս և պատերազմին և գերութեանն և ազատելուն, դառնալով Ասորուց կող- մերը՝ Ֆիմիի հոն եկած տարին (1252), և յաջորդ տարին այլ անգործ չկենա- լով, սկսաւ այն երկրին բոլոր ծովեղե- րեայ քաղքընները նորոգել և ամրացը- նել. այսպէս կ'ընէր և Սիդոնի այլ. որոյ տէրն՝ Յուլիան իր ուրիշ իշխանակցաց նման պատիւ կու սեպէր անանկ մեծ թագաւորէ մը օգնութիւն և պաշտպա- նութիւն գտնելը : Հոս անտարակոյս իր նորահարսն տիկինն այլ՝ Ֆիմի՝ պա- տուեց և պատուեցաւ 'ի Սուրբ թագա- ւորէն փռանկաց, և երկու տարի անոր այցելութեամբը գտաւ իրեն նոր հայր մը. կրցաւ քննել ու զննել այն սքան- չելի անձին վրայ՝ ինչ որ իր հօրը և մօր Զապելի վրայ քիչ կամ շատ տեսեր էր 'ի տղայութեանն. և ինքն դեռ զա- լար և կակուղ հասակաւ և սրտով՝ կու տպաւորէր 'ի հոգին անոր ընտիր ըն- տիր առաքինութեանց կերպարանքը. և անշուշտ անոր իմաստութենէն աւե- լի կու զարմանար բարեպաշտութեանը վրայ, որ ուր այլ ըլլար՝ անխափան իր աղօթքները և կանոնական ժամերը կա տարէր : Թերևս տեսաւ այլ Սուրբ թա- գաւորին ձեռքը սաղմոսիկ մը, որ յե- գիպտոսի բանտին մէջ՝ բոլոր ստա- ցուածքներէն և զրքերէն մէկհատիկ ստացուածք մնացեր էր, և անով իր գերութիւնը կու մխիթարէր. թերևս անկէ շարժեալ և ինքն դիւրազգած տի-

կինն Յիմի՛երբ տրտմութեան հարուած-
ներն առաւ՝ նոյնպիսի մխիթարանք մը
խնդրեց, և ընկալաւ իր թաղձայիւն՝ եր-
կամքք ձեռիւ իր հօրեղբօրը: Ո՛վ գի-
տէ, քանի քանի անգամ Սիդոնի ապա-
րանից եկեղեցւոյն կամ մատրան մէջ՝
սուրբ ծիրանաւոր արքային հետ ծիրա-
նածին տիկինն Յիմի՛ ՚ի ծունկ իջած՝
Աստուծոյ երկրիս վրայ կատարած ա-
մենէն ասեղահարաչ խորհրդեան (պա-
տարագի) առջև՝ հրաթևեալ սրտերնին
կու բարձրացընէին յերկնից յերկինս:...

Փափագելի էր մեզի այլ հիմայ հե-
ռուանց այսպիսի հանդիսից մէջ գտուիլ
յերկար. բայց սուրբ և բարի թագա-
ւորն յերկար չիկենար մէկ տեղ մը .
անդադար մէկ մը հոս, մէկ մ՛ի Տիւրոս
կու փութայ, անկէ յԱ.ք.քեա և ՚ի Յուպ-
պէ: Այս ետքի քաղաքս եղած ատենը՝
յամին 1253, դոյժ հասաւ իրեն, թէ
թշնամիք կու սպառնան Սիդոնի. Սիդոն
պաշարուեր է, Սիդոն առնուեր է. ա-
րիւն և կրակ կու լափեն զՍիդոն: ... Ար-
դեօք ի՛նչ եղաւ մատղաշ բամբիշն. ուր
փախաւ, ուր ամրացաւ Յիմի. և եթէ
սուր և հուր չհասան այլ իրեն, հապա
վախն ու գութն ինչեր չեն հասցըներ:
— փութա՛, վազէ՛, սուրբ թագաւոր, գու-
ցէ հասնիս ու հալածես այն անօրէննե-
րը՝ որ քու իսկ դեռ նորդրած շինու-
թեան քարերդ կու քանդեն... Թող
հիմայ հօրաբրոջը ապարանքը (Յուպպէի
կոմսուհւոյն) և փութա՛ անոր եղբօր
դուստրը ազատելու վտանգէն. անոր
թշնամիքն քու այլ թշնամիքդ են. և
թերևս աւելի քուկդ՝ քան թէ անոր .
կարծեմ թէ քու վրէժդ կ՛ուզեն անկէ
առնուլ. և փոխանակ քաջ հաւուդ՝ տը-
կար վառելի մը հետ կու զարնուին:

Յիրաւի թշնամեաց այս արշաւանքը
կերպով մը Ս. Լուզվիկի համար էր. և
կերպով մը Լուզվիկ պարտական էր
պաշտպանութեան Սիդոնի և անոր տի-
րոջ ու տիկնոջ (Յիմեայ): Վասն զի
պէտք է գիտնաս, Հայկակ, որ երբ Ս.
թագաւորն գերութենէն դարձաւ՝ հաշ-
տութեան դաշինք զնելով զինքը գերող
Եգիպտոսի սուլտանին հետ, (որ արևե-

լեան քրիստոնէից ամենէն մեծ և ահա-
ւոր թշնամին էր), ուրիշ այլազգի իշ-
խանք և սուլտանն Հալէպի և Դամաս-
կոսի՝ նախ սմբեցան. վերջը այս ետ-
քինս սկսաւ գաղտուկ զրդել զԼուզվիկ
որ միաբանի իրեն հետ և քրիստոնեայ
իշխանաց հետ, ու Եգիպտոսի սուլտա-
նին դէմ ելլեն: Սուրբ և հաւատարիմ
թագաւորն մերժեց անոր վատ և խար-
դախ խորհուրդը, և քանի որ Մսրայ
սուլտանն իր դրած դաշինքը կը պահէ,
ես այլ պարտական եմ, կըսէր, պահե-
լու իմ խոստմունքս: Տեսաւ Հալպայ
սուլտանն (Մէլէք-էլ-Նասր Եուսուֆ)
որ մէկ կողմէն Եգիպտոսի սուլտանն
դաշանցը համար յետ պիտի կենայ
քրիստոնէից վնասելէն, մէկայլ կող-
մէն փռանկաց թագաւորն թէ և չի
պատերազմիր՝ բայց քրիստոնէից եր-
կիրները կ՛ամրացընէ. իսկ ուրիշ և ի-
րեն աւելի մօտիկ կողմէն՝ թագաւորն
Հայոց՝ Թաթարաց հետ բանագնաց
կ՛ըլլայ. արդէն իր եղբայրն Սմբատ գուն-
դըստապլ դարձեր էր մեծ խանին քո-
վէն, և հիմայ ինքն Հեթում կու պատ-
րաստուէր երթալու, և իրեն ու քրիս-
տոնէից օգնական բերելու Թաթարաց
անդիմանալի զօրութիւնը, որոյ առա-
ջին հարուածը՝ այն քրիստոնէից մօտ
տեղուանքը՝ ինքն Հալէպի սուլտանն
պիտի առնուր: Արդ երբ յուսահատե-
ցաւ նա սուրբ թագաւորը հրապուրե-
լէն՝ ոխացաւ անոր, և ինչպէս ամեն
վատ կ՛ընէ՝ դարձաւ իր հրապուրածին
դէմ, ու դարձընել ջանաց զԵգիպտոսի
սուլտանն այլ, որոյ դէմ կ՛ուզէր ինքն
երթալ: Երկու անիրաւքն այլ գտան զի-
րար. բայց Մէլէք-էլ-Աշրաֆ-Մուսա
(Մսրայ սուլտանն) աւելի խոստապահ
կամ աւելի խորամանկ՝ տեղէն չչարժե-
ցաւ, սակայն գաղտուկ հաւանութիւն
տուաւ ընկերին. այն ատեն Նասր ձայն
տուաւ իր սահմանաց մէջ և մօտերը
բնակող թիւրքմէնից, ու իբրև իր եր-
կու թշնամի բարեպաշտ թագաւորաց
վրէժը մէկէն առնուլ ուզելով՝ յան-
կարծուց վազեց Սիդոնի վրայ, որ Դա-
մասկոսէ (Շամ) հազիւ մէկ երկու ա-

ուր ճամբայ հեռու է, իսկ 'ի Յուպէէ (Եաֆա), յԱնտիոքայ և 'ի Սոյ, ուր զօրաւոր իշխանքն քրիստոնէից՝ Լուդվիկ, Հեթում և Պեմունդ գտուէին՝ շատ աւելի հեռու: Անակնկալ և ահաւոր եղաւ ասպատակն ու աւերակն. դեռ բաւական ամրութիւն չունէր Սիզոն, կոխան եղաւ թշնամեաց, որք անոր ցամաքային բերդն այլ առին աւրեցին. վազեցին նաև ծովային բերդին վրայ, ուր անշուշտ ապաւիններ էր և տիկինն Ֆիմի. բայց հոս՝ ծովն ամրացաւ և չամրացուց Սիզոն, հապա մանաւանդ յիշեց և կատարեց իր հին խօսքը. « Ո՛չ » երկնեցի և ո՛չ ծնայ և ո՛չ սնուցի երկն տասարդս, և ո՛չ բարձրացուցի կուսանս ». որոց մէջ հիմայ բարձրագոյն բազմած դեռ կուսագեղտիկինն Սիզոնի, ծովուն ալիքներէն աւելի՝ աղօթիւքը կու պաշտպանէր բերդին: Յետ քաջուեցան արիւնարբու և աւերածու թշնամիքն, բայց չարաչար նշաններ թողլով իրենց գազանութեանը. 800 հոգի սրակոտոր եղած սփռած էին Սիզոնի մէջ և ճամբուն վրայ. 400 հոգի այլ երկաթի զարնուած և գերի վարած¹. շատ շէնքեր այլ աւերած: — Ասոնց մէջ՝ չեմ տարակուսիր որ Ֆիմի իրեն պալատէն աւելի կու սիրէր մատուռ մը՝ քաղքին արևելեան դրան քովերը, որ Շամայ ճամբուն վրայ կունայի. մատուռ մը՝ զոր նախնի քրիստոնէից բարեպաշտութիւնն կանգներ և դարուց դար աւանդութեամբ պահէր ու պատուէր. մատուռ մը՝ որ և հիմայ այլ կեցած պատուի, թէ և փոփոխեալ 'ի մզկիթ, Նէպպի-Սիդոն կոչուած: Այս շէնքս այն տեղն է շինուած՝ ուր 1200 տարի յառաջ քան Վիմի՝ իրեն համասեռ փիւնիկեցի մը, մայր մը, մեծ տրտմեալ սիրտ մը՝ կեցեր կուլար ու կանչէր, կ'ուզէր բժշկել իր սրտին սիրուն կտորը, չարաչար տանջուած ու լլկուած աղջիկը. շատերն լսեցին ձայնն ու լացը, և ոչ դք կրցաւ օգնել. և միայն կրցողն

այլ չուզեց: Արարիչն ամենեցուն՝ այն ատեն հոն մարդկորէն քալելով կ'անցնէր. լսեց ու չսեղու զարկաւ... Բայց ո՛վ գորութիւն հաւատոց, ո՛վ մեծութիւն սիրոյ, դու գրեթէ աստուածային հնարից այլ յաղթեցիր: Ասորի կինն ճանչցաւ զՔրիստոս, և պահանջեց ինչ որ իր ցաւոց և անոր ողորմութեանը կու վայելէր. « Ողորմեաց ինձ, որդի Դաւթի, դուստր իմ՝ չարաչար այսահարի ». Քրիստոս լուութեամբ կ'երթար. կինն ետևէն առջևէն աղաղակելով կ'արգելուր. Քրիստոսի աշակերտներն կ'աղաչէին, կինն առաջ անցնելով գետին կ'ընկնար, « երկիր պագանէր նմա և » ասէր. Տէր, օգնեա ինձ ». — Քրիստոս կ'ըսէր թէ ինքը Հրէից բժշկութեան համար զրկուած է, որք Աստուծոյ ընտրած որդիք սեպուած էին, և թէ որդւոց պատրաստուած հացը՝ չէր վայելը շուներու տալ: — « Այո՛ Տէր », խստտովանեցաւ մեծահամբեր և մեծիմաստ կինն, այո՛ Տէր, բայց « Եւ շունք 'ի փրչ » ըսնաց սեղանոյ մանկանցն կերակրին »: — Ո՛հ, ներէ մեզի այլ ըսելու, ո՛վ Տէր մեր, որ կարծեմ հոս քու գրութութեանդ աւելի դժար եկաւ համբերելը, քան թէ այն տառապեալ կրկան՝ իր ցաւոցը. և այլ չէիր կրնար ուշանալ կանչելու, « Ո՛վ կին դու, մեծ » են հաւատք քո. եղիցի քեզ որպէս » և կամիս: Եւ բժշկեցաւ դուստր նորա » 'ի նմին ժամու »: Ահա այս գերապահն զորովալի տեսարանին տեղն էր, ուր իսկապէս և մարմնապէս կեցաւ Աստուածն մեր Քրիստոս, և ուր կինն փիւնիկ Ասորի՝ ընկաւ իր ոտքը. այս տեղէր կանգնած այն մատուռն և հիմկու մզկիթը, ըստ բարեպաշտ և հաւանելի աւանդութեան. և ուր հաւատացելոց հետ ստէպ այցելութեան և աղօթից կու գար՝ փիւնկին հաւատոց և ցաւոց ժառանգն Ֆիմի. և հիմայ այլ անշուշտ իր քաղքին և ժողովրդեան կոտորածոց վրայ կոտորտուելով՝ մայրօրէն ցաւակցութեամբ սրտանց կ'աղաղակէր աւփրկիչն, « Տէր, օգնեա ինձ »:

Հոս մարդասէր Տէրն մեր յօգնու.

¹ Ըստ ամանց 2000 գերի այլ ջարդեցին քէլուատներն:

Թիւն կամ 'ի մխիթարութիւն հասուց զլուզվիկ, որ գոնէ աւելի մեծ վտանգէ ազատեց զՍիդոն. անշուշտ իր գալըստեան կասկածով փութացեր փախեր էին թշնամիքն 'ի Պանէաս կամ 'ի կեսարիա փրկիպպեայ, ըստ աւետարանին. ուր գունդ մը քաջաց խաւրեց հալածեց զանոնք և քաղաքը առաւ. իսկ ինքն կուշտապէր գալ 'ի Սիդոն. որոյ հարուածէն ետև քանի մ'օր անցեր էր, և ղեռ անթաղ մնացեր էին սպանեալքն. և արդէն սկսեր էին գերեզմանի մէջ առնելու կերպարանքին փոխուիլ: Չկրցաւ սուրբ թագաւորն այլ արտասունքը բռնել, և նախ իր հետն եղող Ս. Պապին նուիրակին՝ գերեզմանի երկիր մը օրհնել տուաւ, վերջը դարձաւ իրեն ներուն՝ հրամեց որ թաղեն: Ասոնք՝ որ աւելի թշնամի ջարդել փափագէին քան թէ ընտանի թաղել, և իրենց առաջնորդին սիրտը շունէին, պժգացին զըզուեցան, երեսնին յետ դարձուցին. վատք քան զՄարթա՝ ըսելով, թէ « Հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է »: Այն ատեն Լուզվիկ իր սիրոյ և սրբութեան սքանչելի գործոց մէկն հոս ցրցուց. ձիէն վար ցատքեց և առջի հանդիպած դիակը վերուց շալկեց թագաւորական թիկանցը վրայ, և իբրև խուրձ մը դեղնած ցորենոյ պարկի մէջ դնելով՝ տարաւ ինչուան գերեզմանոցը, իջուց փոսին մէջ, թաղեց, ծածկեց, կնքեց կաթիլ մ'արտասուօք. հինգ օր այսպէս աշխատեցաւ մեռելակրութեան, ոչ միայն առանց գանելու, այլ նահատակաց մարմին սեպելով՝ կրելու ատեն ծովու պահէր և յարգութեամբ կ'իջեցրնէր զանոնք իրենց քնարանը: Այս օրինակէս զարնուած զօրքն և վարձկանք՝ հետևեցան իրենց տիրոջ. և ծովածին Սիդոնի բարձրացեալ երիտասարդքն և կուսանքն՝ վերջապէս հանգչեցան 'ի հայրենի հող մահուն:

Ուրիշ գեղեցիկ և համանման գործ մ'այլ ըրաւ այն մեծ և եղբայրասէր թագաւորն 'ի Սիդոն. տեսնելով որ իր նորոգութիւնները նորէն աւրուեր են, քաջալերեցաւ աւելի ամուր շինելու. և հոս

այլ իրեններուն օրինակ տալով ժրութեան՝ հասարակ մշակի պէս սկսաւ կիրուծեմ շաղուել և քարերը կրել, պատերը հիւսել:

Այս գործս կու յիշեցրնէ մեր հին նախնեաց առասպելախառն երգածը. վարդգէս անուամբ անծանօթ մանուկ դիւցազուն մը, որ Հայկազն Տիգրան թագաւորին հօրը համար Արտիմէտ քաղաքին մէջ շինութեան կ'աշխատէր. « կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի »: Ըսենք արդեօք թէ և գերադիւցազն Լուզվիկ՝ սուրբ թագաւորն Փռանկաց՝ 'ի հինն Ծայղան, կռէր կոփէր զդուռն Ֆիմի տիկնոջ: —

Այն ձմեռուան (1253-4) զրբթէ մեծ մասն հոս 'ի Սիդոն անցուց Լուզվիկ. և ղեռ կ'ուզէր կենալ և շէնքերը պսակել, երբ իրեն այլ յանկարծ հասաւ տրտմագին հարուած մը: Օր մը յանկարծ Յորայերեք բարեկամացը պէս եկան իրեն՝ իր խոստովանահայրն, Պապին նուիրակն և Տիւրոսի արքեպիսն. իմացուցին զմահ իր մօրը, Պլանշ դշխոյի, զոր և թագաւորութեանը տեղակալ զրբէր էր, և սովորականէն աւելի սիրէր և յարգէր. անոր համար խիստ սաստիկ զգաց ցաւը, բայց սրբութեամբը ծածկեց. և մէկէն ընկաւ իր մատրանը մէջ՝ ուր լսեց այս գոյժը, գոհացաւ զԱստուծոյ որ այնքան ատեն իրեն պարգևեր էր այնպիսի արժանաւոր մայր մը. և հանգստեան պաշտօն ընել տալէն ետև՝ փութացաւ ժողովեց մարդիկը, և ուրիշ ատենի թողլով սուրբ երկրին ազատութեան հօգը՝ տուաւ վերջի ողջոյնը իր ասպնջական տիրոջ և տիկնոջ, և ամենայն քրիստոնեայ իշխանաց և բազմութեան հաւատացելոց. որք ետևէն գացին մինչև յԱ.ք.քեա, և մեծ տրտմութեամբ յուղարկեցին նաւով 'ի կիպրոս, ուսկից նաեւ դարձաւ 'ի Գաղղիա: Այս դիպուածս համառօտիւ յիշէ մեր ժամանակագիրն (Մաղաքիա) « Չբ. (1253-4) Ռէ տէ Ֆրանցն (Լոյզ » կամ Լուիզ) վերստին շինեաց զՄայ » տայ և գնաց յաշխարհ իւր » . ինչպէս յառաջ այլ Յոպպէի համար յիշէ, « ՉԱ

(1252-3) . Ռէ տէ ֆրանցն շինեաց ըզ-
» ճաֆն » : — Հիմակուան Սայտայի
բարձրագոյն մասին վրայ կիսաւեր մեծ
աշտարակ մը կայ . մնացորդ շինուածոց
կամ նորոգութեանց Ս . Լուգվիկի :

Պէտք չէ տարակուսիլ՝ որ Լուգվիկի
երթալուն վրայ ամենէն աւելի ցառ-
ղաց մէկն եղաւ Ֆիմի, որոյ գբաւեր
սրտին այս այլ կակուղ հարուած մ'էր .
և այնչափ աւելի էր հոգն ու վախն՝ որ-
չափ որ նոյն տարին իր հայրն Հեթում
թագաւոր այլ ելաւ գնաց երկար ճամ-
բով 'ի թաթարստան, ուսկից ինչուան
որ իր տեղը դարձաւ դադարելու՝ տա-
րիներ անցան : Բայց այն քանի մը
տարիները, (և մինչև 'ի 1260 տարին)
անվտանգ կ'երևին . վասն զի 'ի Հայս
կառավար և պահապան կեցեր էր
Ֆիմիի պապն, մեծախելք թագաւոր-
հայրն Կոստանդին, իր մէկայլ կտրիճ
որդօքն . ուրիշ կողմանէ այլ թաթա-
րաց գալուն վախը կու զսպէր զայլազ-
գիս՝ քրիստոնէից աւելի փնաս չհասցը-
նելու, որ իրենք այլ աւելի փնաս չկրեն :

Այս տարիներուս մէջ ծլեցաւ ծաղ-
կեցաւ Ֆիմի իր զաւակօքը, որ երեք
միայն յիշուին . երկու մանչ, զորս Յու-
լիան իր հօր և հօրեղբօր անուամբ կո-
չեց, և մէկ աղջիկ՝ զոր իր մօրն անուամբ
բը : Ասոնց անուանքն այլ իրենց մօր
հետ վայելչաբար և փաղաքշաբար նշա-
նակուած կու գտնեմ՝ արքայեղբօր Յով-
հաննու ձեռօք, իր ընծայած գրքին մէջ .
ահաւաստիկ .

« Զիմաստութեամբ լցեալն և զամենայն բա-
» րէ ձեռութեամբ զարգարեալն, զսիրոյն Աստու-
» ծոյ և զսպասաւորն ամենայն ծառայից նորա,
» զարքածին բամբէն Ֆիմի, և զաստուածապար-
» զե զաւական նորին՝ զՊալտան և զՃոան և զՏե-
» զանազն Մարկոն, յեչեցէք 'ի Քրիստոս Աս-
» տուած » և այլն :

Այս հեզանազ դատրիկն Ֆիմեայ՝ հարս
գնաց Կուխտանի կամ կիայ՝ Ժիպլէի
տիրոջ, որ է հինն Գեռաղ Ս . գրոց և
Յունաց Բիւքարալ, հիմայ ճէպիլէ կամ
ճէպայիլ կոչուած¹, որ այն ատեն իպ-
լինայ պէս փռանկ տէրութիւն մ'էր .
այն տերանց մէկուն դուստրը կին ա-
ռաւ Պալիան՝ անդրանիկն Ֆիմիի և եր-
կու աղջիկ ունեցաւ . որոց մէկն անուա-
նեց իր սիրելի մօրն անուամբ Ֆիմի, որ
յետոյ եղաւ կին Հերմոյ մարաչախ-
տի . (սա էր թոռն Հեթմոյ՝ եղբօր Ս .
Ներսիսի Լամբրոնացւոյ) :

Աւելորդ է ինծի խօսքով խորհրդա-
ծելն՝ որ Ֆիմի իրեն մեծ հոգ ըրեր էր
իր զաւակաց (թերևս և թոռանց) կրթ-
ութիւնը, և կու ջանար զանոնք այլ
իրեն պէս զարգարել ամենայն թարե-
մեռքեամբ, իրեն պէս ընել սիրողս
Աստուծոյ և ծառայից նորա : Այս բա-
ներս թէ և հօրեղբօր մը բերնով և ձեռ-
քով գրուած են իրեն համար, սակայն
գրողին սուրբ և բարձր աստիճանն և
վարքն վկայ՝ որ ճշմարտութեամբ պատ-
շաճած են անոր . և կու յայտնեն՝ որ
այն ատենուան բազմութիւ մանր տէ-
րութեանց տիկնայց մէջ առաջիններէն
մէկն էր (և մեզի ծանօթից մէջ առա-
ջինն) Ֆիմի, իմաստութեամբ և բարե-
պաշտութեամբ արդարև լցեալ և զար-
դարեալ : Եւ ասոնք էին մեծ զէնք և
զեղք հարուածոց և տրտմութեան դիւ-
րագգած և գթասէր սրտին . իր ծնո-
ղաց և Ս . Լուգվիկի օրինակներն՝ իրեն
կենդանի հայելի մ'էին նմանութեան .
և թերևս անոնց այլ ամեն բանէ աւե-
լի՝ հանդիպած փորձանքներն և վիշ-

¹ Պերութէն վեց եօթն ժամ հեռու դէպ 'ի
հիւսիս, ծովեզերքը : — Այս ՎիՄարկոնի երկն
յամին 1282 հրամանաւ Տաճարօկանաց կարգա-
պետին փորձեց առնուլ զՏրիպօլիս քաղաքը, և
անոնց մատնութեամբը չկրցաւ առնուլ . և գրեց
այս դիպուածը, որ կը պահուի ինչուան հիմա :

տերն եղան մեծ առիթք բարեպաշտութեան և սրբութեան : Ամենուն , բայց աւելի իշխանազանց և մեծատանց համար հարկաւոր կու ճանչնայ մեր սուրբ կրօնքն՝ այսպիսի հարուածներ , որ զիրենք ցնցելով քակեն աշխարհիս ունայնութեանց և պաճուճանաց կրպչուն փափկութիւններէն , և լաւագոյն կենաց և աշխարհի ստոյգ և անանց բարեացը փափագեցընեն : Գուցէ նուազ կ'ըլլար 'ի Զապէլ , 'ի Հեթում , 'ի Ղուգվիկ և 'ի մերս Ֆիմի՝ այս սուրբ փափագս , եթէ վշտերնին այլ պակաս ըլլային : Ուրեմն անվախ փնտռենք քրննենք թէ ուրիշ ինչ փորձանք ու ցաւեր եկան ասոր . մանաւանդ թէ թողունք որ գան , և այլ աւելի փորեն խորցընեն , բարակցընեն և զարդարեն այն ազնիւ սիրտը :

Ֆիմիի քանի մը տարի հանգստեան միջոցը՝ մեծամեծ քաղաքական դիպուածք եղան յարեւելս . հայրն Հեթում դարձաւ 'ի Թաթարաց , մեծ (Մանգու) խաբանին եղբայրը՝ ահաւոր Հուլաղու զանը բիւրաւոր զօրօք ետեւէն բերելով , որ քանի մը տարուան մէջ՝ քրիստոնէից նեղութիւն տուող բռնաւորները և տէրութիւնները ջնջեց . նախ Հաշիշի կամ Աւազակաց ըսուած բռնաւորը . յետոյ Պաղտատու հին և մեծ ամիրապետութիւնը (1258) . վերջը (1259-60) Սիդոնը աւեր և արիւն դարձընող Հալպայ և Շամայ սուլտանը (Մելէք-էլ-Նասրը) զոր և գերի զրկեց 'ի Պարսկաստան . ու անկէ նուաճած երկիրները դարձուց տուաւ Հեթմոյ և ասոր փեսային՝ Անտիոքաց բրնձին . մնաց միայն Եգիպտոսի զօրաւոր սուլտանն . ասոր վրայ այլ կու պատրաստէր յարձըկելու Հայոց և Հատինաց օգնականութեամբ , երբ հասաւ իր եղբօր (Մանգու զանի) մահուան լուրն . ու փութացաւ Հուլաղու դառնալ յարեւելս մեծ զանին ընտրութեան համար , արեւմտեան կողմերուն (յԱսորուց երկիրը) պահապան թողլով զօրօք Քիթրուղա կամ Քէթուպօղա-նոյին զօրավարը , որոյ համար մեր Հեթում Պատմիչն կ'ըսէ , թէ քրիստո-

սի երկրպագութեան եկող մոգուց ցեղէն էր . և բարի ու քրիստոնէասէր ըլլալով՝ սկսաւ խաղաղութեամբ կառավարել իրեն յանձնուած կողմերը¹ : Դրժբաղդարար քրիստոնէից կողմէն եղած անխոհեմութիւն մը՝ մեծ չլիթութեան և ֆնասու պատճառ եղաւ , և նոր ցաւոց մեր Սիդոնի տիկնոյ . վասն զի այս տէրութեան երկրին մէկ մասն՝ որ ինչպէս առաջ յիշեցի , Պելֆորդ կ'ըսուէր² , Շամայ երկրին սահմանակից էր . և բընակչաց մէկ մասն այլ թուրք էին , որք հիմայ զսպուած 'ի Թաթարաց՝ ասոնց տուրք կու տային . և անշուշտ ութ տարի առաջ Սիդոնի վրայ ասպատակողաց ընկեր էին : Հիմայ Սիդոնացի և Պելֆորդեցի տաքդուխ մարդկանցմէ ոմանք՝ կամ հին վրէժը առնլու համար , կամ նոր առիթ մը գտնելով , այս թուրքաց գեղերն ու արտերը կոխեցին , աւրեցին , ոչ առանց սպանութեան տեղացեաց , որոց մէկ մասն այլ իրենց ստացուածով և անասնովը գերի քաշեցին : Մօտերը ձիաւոր Թաթարաց պզտի գունդ մը կար Քիթրուղայի քեռորդւոյն կամ եղբօրորդւոյն հրամանին տակ . մէկէն վազեց այս կտրիճս Սիդոնացոց ետեւէն , պատուիրելով որ գերին և աւարը թողուն . անոնք իրենց անշահ յաղթութեան և աւարներուն վայելմամբ տաքցած և գինովցած , աւելի մեծ յանդրանութեամբ և կուրութեամբ Թաթարաց այլ դէմ դարձան , և քանի մը հոգի սպաննեցին , անոնց հետ մէկտեղ կըտրիճ առաջնորդնին այլ : Դեռ Թաթարաց բարկութեան և վրէժխնդրութեան փորձն առած չէին քրիստոնեայք . Քիթրուղա հոս ոչ անարդար իրաւամբք քալեց կոխեց աւրեց Սիդոնացուց սահմանները , և նոյն իսկ քաղաքն այլ առաւ , նորաչէն պարսպաց մեծ մասը քակեց , ցամաքին բերդը փլուց , դէպ 'ի ծովային

1 Քէրայիդ Թաթարաց ցեղէն էր , որոց մէջ շատնց մտեր էր քրիստոնէութիւն : — Ահսն :
 2 Յանուն բերգաւանին , որ հիմայ Թուի Քիւլտ-էլ-Կիւլտի : Լիբանան լեռանց հարաւային ստորոտը , Նահր-էլ-Լիդանի (Լէոնդ) գետոյն եզերքը :

բերդը դիմողներէն մէկ քանին այլ ըս-
պաննեց . բայց այն բերդը ծովով չըջա-
պատած և պաշտպանած ըլլալով՝ չկըր-
ցաւ առնուլ : Հոն դարձեալ ապաստա-
նած տիկինն Ֆիմի՝ որսորդէ փախած և
ծառին բարձրագոյն ճղերուն մէջ պահ-
ւըտած թռչնոյ պէս կու սարսէր սար-
սափէր . և թերևս ազատելու հնարք
չէր տեսներ, թէ որ անակնկալ դի-
պուած մը չհեռացըններ անկէց զԹա-
թարս :

Հուլաղուի հեռանալը և թողած Թա-
թարաց քիչուորութիւնը լսելով Եգիպ-
տոսի սուլտանն Քուդուզ՝ յարձակե-
ցաւ 'ի Պաղեստին . Քիթբուղա՝ ցրուած
զօրքերը ժողվելով՝ դէմն ելաւ . հասան
իրարու՝ Նապուլուսայ (Սամարիոյ) մօտ
Այն-ճալութ (Աղբիւր Գողիաղայ) ը-
սուած տեղը . սաստիկ եղաւ պատե-
րազմը . Քիթբուղա մեծ քաջութեամբ
կռուեցաւ և աւելի մեծ կտրճութեամբ
մեռաւ : Թաթարներն՝ որ առաջի ան-
գամ էր որ կու յաղթուէին, հալածե-
ցան Ասորոց երկրէն դուրս, որուն տի-
րեցին Եգիպտացիք, բաց 'ի քանի մը
ծովեզերեայ քաղաքներէ, որոց մէկն
այլ էր կիսաւեր դժբաղդ Սիդոնն :

Ասոր տէրն Յուլիան՝ որ տասն տա-
րի չտիրած՝ երկու երեք անգամ տեղ-
ւոյն աւերիլը տեսաւ, հիմայ այլ երկու
կողմէն մեծ վտանգի մէջ գտուելով՝ թէ
յեգիպտացւոց և թէ 'ի Թաթարաց, և
նորէն ոչ Ս . Լուդվիկի մօտաւոր գալըս-
տեան յոյս ունենալով, և ոչ աներոջը
(Հեթմոյ), առանց ասոր խորհուրդ հար-
ցընելու՝ յուսահատական հնարք մը մը-
տածեց, որոշեց, կատարեց . Սիդոնն
այլ Պելփորդն այլ իրենց սահմաններու
վր ծախեց Տաճարական ասպետաց .
« ճուլիան Սայտայու տէրն՝ ծախեաց
» Դամիլուն զՍայիտէն և զՊիաֆորդն »,
կ'ըսէ մեր ժամանակագիրն : Այս բա-
նիս վրայ շատ դժարեցաւ թագաւորն
Հեթմոմ՝ թէ Յուլիանու և թէ անոր եր-
կիրը գնող ասպետաց, որք կերպով մը
իր դատեր իրաւանց այլ կ'անիրաւէին :
Անշուշտ Հեթմոմ իրաւունք ունէր, բայց
Յուլիան այլ իր գլխին ճարը հոգալու

կու ստիպուէր . մանաւանդ որ ուրիշ ի-
րեն նմաններէն այլ կային նոյնպէս մը-
տածողք . և իրմէ քիչ մը վերջը (1264)
իր ազգակիցն Պալիան՝ տէրն Արսու-
ֆայ (որ նոյն փիւնիկիոյ եզերքը Եաֆայի
մօտ ուրիշ ամուր քաղաք մ'է) իր եր-
կիրը ծախեց Հիւրընկալ (Հոսպիտալի)
ասպետաց : Քանի մը տարի ետև (1268)
Պիպարս փնտուխտար սուլտանն Եգիպ-
տոսի առաւ զՊելփորդ բերդաքաղաքը .
նոյն տարին առաւ և զԱնտիոք այլ, ո-
րոյ տիկինն էր քոյրն Ֆիմեայ : Այս ա-
մեն դիպուածքս մէկմէկ հարուածք և
առիթք էին տրտմութեան իր սրտին .
և մանաւանդ երկու տարի առաջ (1266)
հանդիպած կսկծալին, իր եղբոր՝ Թո-
րոսի՝ սպանուին յեգիպտացւոց՝ պա-
տերազմի մէջ, և միւս եղբոր Լևոնի (Գ)
դերութիւնը, ու հօրը մեծ տառապան-
քը՝ ինչուան որ ազատեց զնա : Այս ցա-
ւալի տարիներուն մէջ՝ Ֆիմի անշուշտ
ապաստանած էր իր հօր թագաւորու-
թեան երկրին մէջ, և անոր սգակից
կ'ըլլար, հետզհետէ կրելով և իմանա-
լով ինչ որ « սեփական է մարդկան՝
» նժգեհուութիւն և պանդխտութիւն և
» փորձանք » : Թէպէտև քիչ մը վերջը
բոլոր կիլիկիոյ և իր արքունի ընտանեաց
հետ ուրախացաւ ազատութեամբ Լևո-
նի (1268), բայց եղբայրը գտնելով՝ գրե-
թէ հայրը կորուս . վասն զի Հեթմոմ
զորդին թագաւորեցընելով՝ ինքն հրա-
ժարեցաւ 'ի թագէ և յաշխարհէ, և
կրօնաւորելով քիչ ատենէ մեռաւ, (28
հոկտեմբ. 1270) . նոյն օրերը հասաւ և
Ս . Լուդվիկի մահուան լուրը, որ երկու
ամսով յառաջ վախճաններ էր (25 օ-
գոստ) : Այսպէս գրեթէ երկու հօր սուգ
ու ցաւ մէկտեղ կրեց Ֆիմի : Անոնցմէ
առաջ վախճաններ էին իր հօրեղբարց
մէկ քանին, և աւելի առաջ (1262) ա-
նոնց նահապետական հայրն՝ Կոստան-
դին : Բայց իր սրտին մերձագոյն և մաւ-
նակից անձն, իր ամուսինն՝ Սիդոնը ծա-
խելէն 15 տարի ետև « Մեռաւ ճու-
լիան, Սայտայոյ տէրն » . (1275) ըստ
ժամանակագրին . այն տարին՝ որ Կի-
լիկիոյ մէջ սաստիկ սով և մարդամահ

այլ եղաւ : Ի՞նչ կերպով եղաւ Յուլիանու մահն՝ չեմ գիտեր . մեր ժամանակագրին յիշելէն յայտնի կ'ըլլայ որ Հայոց երկրին մէջ էր . և աւելի յայտնին այս է՝ որ իր այրւոյն սրտին մեծագոյն վէրք և տրտմութեան առիթ եղաւ :

Այլ միթէ նուազ կսկիծ եղած էր անոր մայրենի սրտին՝ կորուստ իր կըրսեր և կայտառ որդեկին . Ի՞նչ լայն և խոր պատառուածք բացաւ այն ազնիւ սրտին մէջ՝ տարաժամ և տարադէպ լուր մը , թէ քու ջաջուռ ու ճօճուն ճուանդ չկայ ... մարեցաւ անոր լուսաւոր արևակն : Արդարև ջուրք մարեցին , ընկղմեցին , խեղդեցին զճուան . — անոնց մէջ լուացուելուն կամ լողալուն ատեն , թէ անոնց վրայէն անցնելուն . — գիտցածնիս այս է , որ օր մը Ֆիմեայ առջև բերուեցաւ փռուեցաւ ճուան երկայն հասակաւր , գետէն հանած մեծամեծ շուշանաց շալակի մը պէս . ջրերն՝ որ իր այնքան շնորհքը քաղեր կլլեր էին , անշուշտ մէկ կակուղ և խոնաւ շնորհք մ'այլ դեռ թողեր կամ տուեր էին կերպարանացը . զոր փոխանակ կէս ծածկելու՝ բոլորովին բաց թողուին գագաթէն վար կախուած քամուած ու մէկ փունջ եղած խարտեաչ գիսակներն ... դեռ ամեն բան լման և նոյն կու տեսնէր Ֆիմի՝ իր ճուանին վրայ . միայն չըշարժելէն և իր վիզը չպլլուելէն հաւատաց մայրն որ որդին անշնչացեր ... մեռեր է . « Եւ եգել զաղիս նորա » : ... Թողունք այս պժգալի տեսարանը , որ եթէ սրտակտուտ է ամեն հանդիպողի , ի՞նչ պիտի ըլլայ մօր մը սրտին և Ֆիմիի պէս մօր ... Հոս ձեռուրնիս կու կապուի , շրթուրնիս կու փակուին . հոս՝ արդարև միայն միախառնուած ու անդորր կրնայ տալ այն՝ որ անհնաճնարև է : — Իջիր արդ հիմայ , ո՛վ բարի հօրեղբայր , իջիր քու Բարձրբերդի սուրբ զիտանոցէդ , և բեր քու թոռնէիդ այդ Ամենահնարին ներշնչեալ սուրբ պատգամները , քու ձեռագիծ գրքոյկդ , և փորձով ժողովողին ու փորձանօրն Յորայ՝ սփոփէ այդ իրաւացի տրտմեալ սիրտը : Ահաւազիկ մէկ յիշատակարան

մ'այլ արքայեղբօրն Յովհաննու առ Ֆիմի , նոյն գրոց մէջ , ոտանաւոր չափով՝ .

Յաստուածային սէրն հարեալ
Սա որ հըրով նորին վառեալ,
Որ եւ ըզտառս այս ըստացեալ
Բամբիշն մեծ՝ Ֆիմի կոչեալ .
Հեթմոց քաջի նա դուստրը լեալ,
Որ էր արքայ հայոց օծեալ .
Անցաւոր դայս ծանուցեալ,
Անանց թագին այն բաղձացեալ .
Նորափետուր սովաւ պըճնեալ
Լի լապտերօք ընդառաջեալ .
Նոր փեսային է հարսնացեալ,
Մըտից գրախտին արժանանալ :
Եղկելիս սովաւ թախծեալ
Երկամբք մատանցս ըզսս ստանալ .
Սակս որոյ ՚ի մի գործ սկըսեալ
Փոքր ինչ յայլոց օժանդակեալ :
Ստացողք վերջոյ և որք օգտեալ
Հայցեմք՝ բարի մասըն մեզ տալ . և այլն :

Այն տարին որ Ֆիմի այրիացաւ՝ իր աւելի բարձրիշխան քոյրն այլ Զապլուն՝ այրի մնաց (1275, մայիս 11) մահուամբ բրնձին Անտիոքու (Չ Պեմուենդ) . որոյ տղահասակ որդւոյն (Է Պեմուենդի) խնամակալ եղաւ ինքն մայրն . և հաւանօրէն 1/4 տարի ետքը տեսաւ իր և անոր տէրութեան բոլորովին վերջանալը , երբ Քէլաուն կամ Քալիլ Աշրաֆ սուլտանն Եգիպտոսի առաւ զԱնտիոքու վերուց անկէ քրիստոնէից 200 տարուան պայազատութիւնը : Իրեք տարի վերջը (1291) մէկայլ Զապլունն այլ (Իրենց եղբօր՝ Գ . Լևոնին դուստրն) տիկինն Տիւրոսի՝ զրկեցաւ իր տիկնութենէն . վասն զի երբ Եգիպտացիք առին զԱ.ք.քեա՝ քրիստոնէից ամենէն ամուր ապաստանարանը , անոր պաշտպան ասպետքն փախան ապաւինեցան մեր Ֆիմեայ հին ապաւէնը , ՚ի ծովային բերդն Սիդոնի . բայց երբ թշնամիք նաւերով մօտեցան անոր , անկէց այլ փախան զնացին ՚ի կիպրոս : Այս բաներուս աւանատես Պատմիչն Հեթում՝ կ'ըսէ . « Աշրաֆ էառ զԱ.ք.քա՝ ի քրիստոնէիցն . » և թողին քրիստոնէքն առանց պա-

1 Որոյ տնագլուխ տառերն կապին Յոհաննէաւէմ :

» տերազմի զՍուր (Տիւրոս), զՍայտէ
 » (Սիդոն), զՊերուժ. և յայսմ ամի
 » ջնջեցաւ քրիստոնէութիւնն 'ի Սէհ-
 » լէն »¹ : Ուրեմն Յուլիանու և Ֆիմեայ
 թողլէն 31 տարի ետև այլ՝ դեռ ասպե-
 տաց ձեռքն էր Սիդոնի ծովապատ ամ-
 բոցը. և այս տարի յետ ուրիշ քաղա-
 քաց և բերդից՝ մատնեցաւ այլազգեաց
 ձեռքը. թէպէտ և իր պայազատքն ի-
 րենց օտարութեան մէջ այլ պահէին
 իրենց կորուսած տէրութեան անունը.
 և ինչուան գրեթէ հարիւր տարի վերջ
 այլ (1368) յիշուի Փիլիպ իպլինեան
 տէր Սիդոնի, որ 'ի կիպրոս բնակէր, և
 հաւանօրէն Յուլիանու և Ֆիմեայ տոհ-
 մէն էր : — Թշնամիք՝ որ շատ անգամ
 յարձակեր և վաճառուեր էին 'ի Սայ-
 տայէ, հիմայ պարապ և անպահապան
 գտնելով՝ քարերէն և աշտարակներէն
 առին վրէժնին, փլցրնելով և թափելով՝
 երբեմն զանոնք ծիծաղող և երբեմն ծե-
 ծող ծովուն ծոցը. որ և մահաձայն
 մոնչմամբ մաս մը ծածկեց, մաս մը ա-
 լիքներէն դուրս թողուց մինչև ցայսօր,
 'ի տեսիլ նաւողաց յափունս Փիւնի-
 կիոյ : — Այսպէս եղաւ վախճան տէ-
 րութեան առաջին և հնազոյն ծովա-
 մայր քաղաքին, որոյ վերջին գահանիստ
 տիկինն եղեր էր Ֆիմի : ...

Արդեօք հասաւ իր ակընջին այն սըր-
 տաթափ պարսպաց փլչելուն դղրմուն-
 քը, և ալէկոծեալ ծովուն խոխոջալը այն
 աւերակաց մէջ. արդեօք իր խորացեալ
 սրտէն հնջեց արձագանգ մը 'ի պատաս-
 խանի ծիւրեալ և ծորեալ Մայրանին
 ծփանացը՝ այն անծերանալի ծովուն
 կոհակացը մէջ : — Եթէ ոչ մոնչումն և
 կոծումն ծովուն և Մայրանայ՝ սակայն
 անշուշտ եղածին համբաւը հասաւ հրն-
 չեց ու ընկաւ Ֆիմիի ընտրած նոր և յե-
 տին ապաստանարանի մը ամբողջին
 պարսպաց տակ : Այս ապաստանարանս
 էր զոր շատ թագաւորք և անթագք ընտ-
 րեցին իբրև մէկ հատիկ ամբոց սրտի և
 հոգւոյ, ընդդէմ ամենայն մրրկաց, խռ-
 վութեանց և աշխատութեանց աշխար-

¹ Այսինքն 'ի Ծովեզերքէն, որ արաբերէն առ-
 փու կ'ըսուի :

հի. ուր ոչ շատ տարի առաջ՝ նոյն ինքն
 իր հայրն Հեթում այլ յետ 45 ամեայ
 երկար և բազմադիպուած թագաւորու-
 թեանն եկեր էր իր մեծ սրտին յոգնած և
 յետին մխիթարութիւնը և հանգիստը
 գտնելու : Այս ապաստանարանս էր հա-
 ւատաւորաց վանք մը՝ զոր փնտուեց, զը-
 տաւ և մտաւ Ֆիմի այլ, յետ իր այնքան
 ևժդեհուքեանն, պաւնդիտուքեանն և
 փորձանւսն. և ոչ այնքան տրտմու-
 թեամբ տուաւ իր ծովակոծ Մայրանի
 ապարանից՝ որչափ ուրախութեամբ տը-
 ւաւ բոլոր աշխարհիս ծովածուփ կե-
 նաց՝ մնաք բարով, ըսելով. « ամե-
 » նայն զբօսանք ձեր և ալիք ձեր անցին
 » 'ի վերայ իմ » . և քաշուեցաւ 'ի խորշն
 խաղաղութեան, լռիկ սրբիկ սպասել
 ամենէն վերջի և ամեն բան վերջացը-
 նող դիպուածին, մինչև որ ճգնողական
 վարուքն « հանգեաւ 'ի Գրիստոս տի-
 » կինն Ֆիմի, կրօնաւորն, քոյրն Լևոն
 « թագաւորի » . ինչպէս կ'ըսեն արքու-
 նական Յայսմաւուրք, 'ի մէջ բազմա-
 թիւ Ֆիմեաց և տիկնայց՝ սեփականե-
 լով ասոր՝ կրօնաւոր կոչումը : ...

Հանգեաւ. — ո՛հ, ո՛րքան խոր է այս
 հնչումս, և ո՛րքան քաղցր իր ազգեցու-
 թիւնն այնպիսի սրտի մը, որ յերկար
 ալէկոծուած 'ի ծովու կենցաղոյս՝ եկեր
 նստեր է մէկ կրօնական առանձնու-
 թեան մը մէջ՝ իր մնացեալ օրերուն
 հանգիստը փնտուելու, և աւելի մեծ և
 անվերջ հանգստեան մը փոխադրուե-
 լու : ... Հանգեաւ ուրեմն այն քու նըր-
 բազգած սրտիկն, ո՛վ տիկին Սիդոնի, ո-
 րոյ փափկութեանը՝ շատ խիստ և փշոտ
 էր աշխարհքս և անոր վայելքն. արդա-
 րև մեծոգի ես եղեր դու, իմաստու-
 թեամբ լցեալ, սիրող Աստուծոյ և սպա-
 սաւոր նորա. երանի քեզ : — Ո՛հ, ինչու
 դու այլ չհետևեցար այս քու հօրքրոջ՝
 ո՛վ տիկին Տիւրոսի գոռոզը Չապլուն,
 և յետ իրեն պէս գահդ կորսընցընելու՝
 ուրիշ գահից և բարձից ետևէ ընկնա-
 լով, ոչ թէ միայն այսպիսի խաղաղ և
 երջանիկ հանգիստ մը չգտար, այլ և
 անանկ կատարած մ'ունեցար՝ զոր յի-
 շեն իսկ պժգալի է :

Բայց երբ, և ո՞ւր հանգեաւ, և ո՞ւր արդ հանգչի մերս Ֆիմի: ... Պատմութիւնն՝ ձայն չիտար: Բայց ինձ հաւանական կ'երևի՝ թէ իր պարկեշտ նըշխարքն այլ իր բարեպաշտ ծնողացը քով (Չապելի և Հեթմոյ) խաղաղեցան ՚ի դամբանս Դրազարկ վանաց. ուր՝ ինչպէս իրմէ առաջ՝ վերջն այլ եկան ընկան հանգչեցան թագով ու սաղաւարտով յոգնած գլուխք. զորոնք, ասոսոս, ժամանակն և թշնամութիւնն կամ ջնջեց կամ ծածկեց. ֆէօլէմէնք և Գարամանք ոտնակոխ ըրին և զտապանատունն թագաւորաց և վարդապետաց՝ զԴրազարկ: Իսկ արդեօք հիմայ մեր յետին հայրենի երկրին վրայ այնչափ պըսակով նազող գլխոց հետ՝ դեռ Ֆիմի այլ հանգչի իր երկու քարէ բարձիցը մէջ՝ իր 600 տարուան քնովը:— Արդեօք կռնճմտած կողերով կուկկայ կաղնին՝, կամ մշտնջենաւոր եղերամօր պէս երկրամեծեալ հողմատանջ եղևինն Տաւրոսի՝ աւերակաց մէջ անաւեր աճելով, դեռ կու պաշտպանեն զՖիմի ծածկող

քարը. — և այն քարին վրայ արդեօք սրատես լուսինն՝ իր դողդոջուն ճառագայթովը կրնայ դեռ կարդալ մամուռ պատ տապանագիր մը, օրինակ իմն.


Ի կափարուք խաչապահակ փոքուս վիմի
Կայ մեծոգին և հեղ տիկին Սայտայ՝ Ֆիմի:

— Եւ արդեօք իր լուռ քնարանին վրայ տարուէ տարի թափած տերևներուն նման՝ դեռ ցամքած թաղանթ մը մնացեր է այն ազնիւ, կակուղ և կարմիր սրտին, զոր անմեղ տրտմութիւնք բարակ ճամբաներով այնչափ փորեցին և խորեցին, և երկնաւոր մխիթարութիւնք՝ լայնեցին և լցուցին. — այն սրտին, զոր եթէ փորձանք երկրի իջուցին ՚ի գահէ և ՚ի փառաց, երկինք՝ բարձրացուցին մօտ իր սրբակեաց ծնօղացը և Ս. Լուդվիկի. — այն սրտին, որ իր արենակցաց և անուանակցաց մէջ՝ ամենէն մաքուր և սիրուն յիշատակ մը թողլով, պարտական կ'ընէ զհայ հայրենիս՝ որ իր դըպրութեանց մէջ անմոռաց պահէ և զյետին տիկինն Սիդոնի՝ Չապելածինն Ֆիմի:

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

1 Լէռ և բերդ մօտ ՚ի պահակն կամ ՚ի լեռն անցս Կիւլիկիոյ, որ հիմայ կոչի Կիւլէի բողբուլ:

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐ ՏԱՐԻՈՅ



Ահա ժամ մի. եւ դոյզըն պահ կարճատեւ,
Որ միշտ հակիրճ չափեալ էիցս երկրածին՝
Եւ շըրջեսցի անուոյն հուսկ գիլ արփաթեւ
Հընոյ ամին՝ որ յամր ի ճեմ եւ ցըրտին,
Անծայրածիր յաւերթութեան առ աղբուր՝
Ուստ ել՝ դառնայ. եւ նոր ընդ իւր՝ հետամուտ
Թեւազգեցիկ, գայցէ շաւիղ հարթ եւ դիւր՝
Ամ օդապար. այլ թէ վըշտաց նա անգութ,
Եթէ խընդից լիցի գուշակ,
Հետքն առնիցեն ըզմեզ գիտակ: